

ԴՈՏԿ. ԲԵՐԿՐՈՒՀԻ ՍՎԱՃԵԱՆ
1918-2001

Դոկտ. Բերկրուհի Նահարեան-Սվաճեան ծնած է Խարբերդ (Արևմտեան Հայաստան) 1918ին: Ծառ շատով ընտանիքը կը տեղափախուի Պէյրութ: Կը հետեւի Պատմութեան եւ Անգլերէն լեզուի՝ Պէյրութի Ամերիկան Համալսարանէն ներս՝ ստանալով Պահանջանայի աստիճանը:

1952ին նիւ Նորքի Քորթէ Համալսարանէն կը ստանայ մագիստրոս արուեստաբնութեան եւ մանկավարժութեան տիտղոսը, եւ հոգեբանութեան ու փիլիսոփայութեան ասպարեզին մէջ կը հանդիսանայ առաջին կինը, որ կ'արժանանայ ՓՀՕ տիտրոսին:

Դոկտ. Սվաճեան կը երաւիրուի դասախոսելու Պէյրութ Քոլեջին մէջ, եւ 1961ին կ'ամուսնանայ նիւ Նորքէն Դոկտ. Ստեփան Սվաճեանին հետ եւ կը հաստատուի Միացեալ Նահանգներ, ուր կը դասաւանդէ “Columbia” համալսարանին մէջ:

1963ին 1988 շարունակարար եղած է Պրուէլին Քոլեջի մանկավարժութեան եւ հոգեբանութեան ամսիննի գլխաւոր վարիչը: Սնոր ուսումնասիրութիւններն ու աշխատասիրութիւնները հրապարակուած են ամերիկան բազմաթիւ պարբերականներու մէջ: Ան հանրանանա հոգեբաններու հետ համագործակցարար հատորներ հրատարակած է: Կրթական, հոգեբանական եւ դաստիարակչական ասպարեզներուն մէջ առ ի գնահատանք իր ներդրումներուն ան արժանացած է բարձր շնչառականութեան:

Պրուէլին Քոլեջի 150ամեան պատմութեան ընթացքին, նա հանդիսացած է երկրորդ կին դասախոսն ու ամպինի վարիչը:

1963ին մինչև 1998 ան եղած է ՀԲՀՍի Կրթական Կեդրոնական Միութեան վարչութեան անդամ: Խոկ 1973ին մինչև 1990, ՀԲՀՍի Ամերիկայի Կեդրոնական Միութեան վարչութեան անդամ:

Ան եղած է նիւ Նորքի Modern Art բանգարանի արուեստաբան խորհրդականը: Նաև Մանուկ Ճիմիշեան Հիմնադրամի երիցական նկեղեցւոյ Յանձնական Մատուցութեան պատուին:

1998ին Դոկտ. Սվաճեան Ամերիկան կառավարութեան կողմէ կը պարզեւատրուի “Ellis Island” պատոյ մետարով, որպէս Միացեալ Նախանգներ ապած եւ այդ երկրին համար բացառիկ ծառայութիւն մատուցած անհատ:

Բարձր մտաւորական, դաստիարակ, հայութաւ մտաւորական համելիսացող Դոկտ. Բերկրուհի Սվաճեան վախճանեցաւ 24 Փետրուար 2001ին, ծանր հիւանդութեան հետեւամբով:

Ուրաք, Մարտի 9ին, Ամերիկայի Հայոց Արևելեան Թիմին Առաջնորդ Խաժակ Արք. Պարսամեանի նախագահութեամբ, նիւ Նորքի Ս. Վարդան Մայր Տանարին մէջ տեղի ունեցաւ հանգուցեալի յուղարկաւորութեան արարողութիւնը:

Մարտ 14ին արժամայիշատակ հանգուցեալի դասեր ու ամուսնոյն՝ Տէր եւ Տիկին Յակոր եւ Սիլվա Նահայեաններու խնդրանկով, իր անիւնը կնքուած դագարով տեղափախութեցաւ Երուսաղէմ, ուր Պատրիարք Սրբազն Հօր նախագահութեամբ, հարազատներու, Միացեան պատմութեան եւ ժողովուրդի մասնակցութեամբ յուղարկաւորութեան արարողութիւնը յետոյ, առաջնորդութեցաւ Ս. Փրկչի Հայոց Գերեզմանատութիւնը: Այժմ հանգուցեալի մարմինը կը հանգչի ամուսնոյնին կողմին: